

## ՍՈՂՈՄՈՆ ԹԵԿԼԻՐՅԱՆԸ ԵՎ «ՆԵՄԵՍԻՍ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հատուկ գործի մասին ՀՅԴ

9-րդ Ընդհանուր ժողովի որոշման 100-ամյակի առթիվ\*

«Ինքը՝ Սողոմոն Թեհլիրյանը, միայն խորհրդանիշ է, հյուլե, որի մեջ է կենտրոնացած քամահրված ռասայի ցավը, և որը հուսահատ ինքնապաշտպանության մեջ իր վրեժն է լուծում»<sup>1</sup>:

*Արմին Թեոֆիլ Վեգներ*

**Բանալի բառեր** - Սողոմոն Թեհլիրյան, Հատուկ գործ, «Նեմեսիս» գործողություն, Ահարոն Սաչակլյան, երիտթուրքերի դատավարություն, Արմեն Գարո, Շահան Նաթալի, Հատուկ գումար, ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողով, Օսմանյան կայսրություն, Հայոց ցեղասպանության ոճրագործներ, Թալեաթ:

### Մուտք

**1919 թ. աշնանը (28 սեպտեմբերի - 2 նոյեմբերի) Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում գումարվեց ՀՅ Դաշնակցության 9-րդ Ընդհանուր ժողովը, որի 100-ամյակը լրանում է այս տարի:**

Նորանկախ պետականության կայացման, երկրի արտաքին ու ներքին քաղաքականության բազում հարցերից ու խնդիրներից գատ խիստ գաղտնի պայմաններում ՀՅԴ Ընդհանուր ժողովը որոշեց մահապատժի ենթարկել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և իրականացնողներին, ովքեր տարբեր պատճառներով խուսափել էին թուրքական ռազմական դատարանի դատավճից: Ժողովի կողմից հավանության արժանացած այդ գործողությունը կոչվեց

\* «Վեմ»-ի խմբագրությունը որոշ վերապահումներ ունի հեղինակի մի շարք ուղղագիծ դիտարկումների վերաբերյալ, որոնք դեռևս չեն հաստատվում համապատասխան փաստաթղթերի միջոցով: Մասնավորապես դրանք վերաբերում են Վ. Պոլսում դավաճան Հարություն Սկրտչյանի ահաբեկման հանգամանքներին, ինչպես նաև Երանուհի Դանիելյանի՝ ՀՅԴ Հատուկ մարմնի հետ ունեցած առնչության հարցին: Սակայն, հաշվի առնելով հեղինակի կատարած ծավալուն աշխատանքն ու Հատուկ գործի մասին ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի պատմական որոշման 100-ամյակը, տպագրում ենք հոդվածը՝ վիճելի հարցերի շուրջ քննարկումների հրավիրելով մեր ընթերցողներին: Հոդվածն ընդունվել է տպագրության 10. 11. 2019:

1 Судебный процесс Талаата паша: стенографический отчет. Под редакцией, с предисловием и примечаниями доктора исторических наук, профессора **Степана Степаняна**, Ер., 2007, с. 6.

«Հատուկ գործ», որը մեր հանրությանն ավելի շատ հայտնի է «Նեմեսիս» անունով: Այն վստահվեց ՀՅԴ Հատուկ կամ Պատասխանատու մարմինին:

Ընդհանուր ժողովի գաղտնի որոշման ընդունումից հետո սկսվեց Հայոց ցեղասպանության կազմակերպիչների նկատմամբ պատժիչ գործողությունների մանրագնին նախապատրաստությունը: Դրա ծրագրման ու կենսագործման անմիջական պատասխանատվությունը և վերահսկողությունը դրվեց ԱՄՆ-ում գտնվող ՀՅԴ ճանաչված գործիչներ Արմեն Գարոյի (Գարեգին Փաստրմաճյան) և Շահան Նաթալիի (Հակոբ Տեր-Հակոբյան) վրա: Հատուկ մարմնի կազմում ներգրավվեցին Հայոց ցեղասպանությանը ականատես դարձած երիտասարդներ, ովքեր ունեին մարտական հարուստ փորձառություն՝ Սողոմոն Թեհլիրյանը, Արշավիր Շիրակյանը, Արամ Երկանյանը, Միսաք Թորլաքյանը և ուրիշներ: «Նեմեսիս» գործողության կազմակերպման ընդհատակյա կենտրոններն էին «Հայրենիք» (Բոստոնում) և «Ճակատամարտ» (Կ. Պոլսում) թերթերի խմբագրատները: Իսկ Հրաչ Փափազյանի գլխավորած խումբը պետք է տեղեկություններ հայթայթեր երիտթուրքերի հանցավոր պարագլուխների գտնվելու վայրի մասին:

## 1. Իրավիճակը Թուրքիայում Առաջին աշխարհամարտից հետո

Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունից հետո նոր կառավարությունը դաշնակիցների պնդմամբ որոշեց դատական պատասխանատվության ենթարկել երիտթուրքական կառավարության ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին՝ Օսմանյան կայսրությանը պատերազմի մեջ ներքաշելու և հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար,<sup>2</sup> և 1918 թ. նոյեմբերի 11-ին սկսեց հետաքննությունը: Մի քանի օրվա ընթացքում Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարությունում կազմվեցին հայերի տեղահանության և կոտորածների մասնակիցների գործերը, որոնց կցվեցին նաև տեղական պաշտոնյաների՝ վալիների, մութասարիֆների և կայմակամների գործերը<sup>3</sup>: Իսկ 1918 թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ կազմվում են հարցաքննիչ հանձնախմբեր, որոնք սկսում են հավաքել հայերի կոտորածների վերաբերյալ մեղադրական ապացույցներ՝ ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, հրահանգներ, ականատեսների վկայություններ: Այդ հանձնախմբերից առավել կարևոր հետաքննություն է վարել հենց ներքին գործերի նախարարության կողմից ստեղծված հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովը, որը պատմության մեջ հայտնի է Մազհարի հանձնաժողով անունով:

2 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Հ. Փափազյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտ. ինստ., 1988, էջ 3:

3 Տե՛ս Dadrian V. N., Akcam T., Judgment at Istanbul, New York, “Berghahn books”, 2011, էջ 57-58:

Դատավարություններին նախորդած հետաքննությունն իրականացվել է հենց այս հանձնաժողովի կողմից<sup>4</sup>: Ձերբակալվել են բարձրաստիճան պաշտոնյաներ ու զինվորականներ, ընդհանուր առմամբ՝ 300 հոգի<sup>5</sup>: 1919 թ. մարտի 8-ին սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի (1918-1922) հատուկ հրամանագրով երիտթուրքական կուսակցական պարագլուխների ու նախարարների գործը հանձնվում է Կոստանդնուպոլսի ռազմական արտակարգ ատյանի քննությանը<sup>6</sup>:

Սակայն երիտթուրքական գլխավոր հանցախումբը (Մեհմեդ Թալեաթ, Իսմայիլ Էնվեր, Ահմեդ Ջեմալ, Բեհաէդդին Շաքիր, Մեհմեդ Նազըմ, Օսման Բեդրի և Հուսեյն Ազմի), դեռևս 1918 թ. նոյեմբերի 1-ին գերմանական ռազմանավով ճողալով էր Թուրքիայից<sup>7</sup> խուսափելով ձերբակալությունից և քրեական պատասխանատվությունից: Ելնելով այս հանգամանքից՝ 1919 թ. հուլիսի 5-ին թուրքական դատարանը, առաջնորդվելով Օսմանյան կայսրության քրեական օրենսգրքի 45-րդ, 55-րդ և 170-րդ հոդվածներով, Թալեաթին, Էնվերին, Ջեմալին և դուրսը Նազըմին հեռակա կարգով մահապատժի դատապարտեց: Մյուս մեղադրյալները (Օսմանյան կայսրության ֆինանսների նախարար Ջավիդը, հողագործության և առևտրի նախարար Մուստաֆա Շերիֆը և շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին), համաձայն 45-րդ հոդվածի 2-րդ և 55-րդ հոդվածի վերջին կետերի, դատապարտվեցին 15 տարվա աքսորի<sup>8</sup>: Դատավճռում չընդգրկվեցին դաշնակիցների կողմից Մալթա կղզի աքսորված 77 հանցագործները<sup>9</sup>:

## 2. Հատուկ գործը

Ինչպես արդեն նշվեց, պատասխանատվությունից խուսափած երիտթուրք հանցագործներին արժանի պատժի ենթարկելու համար 1919 թ. աշնանը Երևանում կայացած Հայ Յեղափոխական Դաշնակցության 9-րդ Ընդհանուր ժողովը<sup>10</sup> խիստ գաղտնի պայմաններում ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Արմեն Գարոյի<sup>11</sup> ղեկավարությամբ հիմք դրեց **Հատուկ գործին**, այն է՝ հայերի կոտորածնե-

4 Տե՛ս **Անույան Մ.**, Ճանաչում և դատապարտում. Երիտթուրքական դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Եր., Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013, էջ 41:  
5 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 13, տես նաև **Անույան Մ.**, նշվ. աշխ., էջ 47:  
6 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 14:  
7 Տե՛ս **Dadrian V. N., Akcam T.**, նշվ. աշխ., էջ 24:  
8 Տե՛ս **Dadrian V. N.**, The history of the Armenian Genocide, Ethnic conflicts from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence, “Berghahan books”, 1995, էջ 331:  
9 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 19: Վ. Դադրյանը Մալթա աքսորված երիտթուրքերի թիվը նշում է 67: Տե՛ս **Dadrian V.**, The history of the Armenian Genocide, էջ 308:  
10 Ժողովի մասին ավելի մանրամասն տես **Տասնապետան Հ., Հ.** Յ. Դաշնակցությունը իր կազմութենէն մինչեւ ժ. Ընդհ. ժողովը (1890-1924), Աթենք, «Դրօշակ»-ի տպարան, 1988, էջ 138-140:  
11 **Արմեն Գարո** (Գարեգին Փաստրմաճյան) (1872 թ., Կարին - 1923 թ., ժնև)՝ հայ ականավոր քաղաքական, պետական ու հասարակական գործիչ, ՀՅԴ անդամ:

րի կազմակերպիչներին ու իրագործողներին հայտնաբերելու և ոչնչացնելու հատուկ գործողությանը<sup>12</sup>:

1920 թ. հուլիսին Բոստոնում տեղի ունեցավ ՀՅԴ ԱՄՆ 27-րդ Շրջանային ժողովը, որը, հիմնվելով Երևանում կայացած Ընդհանուր ժողովի որոշումների վրա, գործողությունն իրագործելու նպատակով որոշեց ստեղծել ֆինանսական միջոցներն ապահովող **Հատուկ գումարը** (հատուկ ֆոնդը)<sup>13</sup>: **Հատուկ գործը** փաստացի ղեկավարում էին **Արմեն Գարոն**<sup>14</sup> գործողության հոգին, որի համաձայնությամբ դրա մասնակիցներն ընդգրկվում էին գաղտնի գործողության մեջ, և որը վերահսկում էր գործողության իրագործման շրթան սկզբից մինչև վերջ, և **Շահան Նաթալին**<sup>15</sup> գործողության սիրտը, գաղափարական կազմակերպիչը: Շահան Նաթալին, համակարգելով հետախուզական խմբերի գործունեությունը Ժնևում, Փարիզում, Բեռլինում և Հռոմում, ղեկավարում էր Եվրոպայում թաքնվող ծայտյալ երիտթուրք հանցագործների բացահայտման գործը: Երրորդ գլխավոր դեմքը **Ահարոն Սաչակյանն** էր, որը ղեկավարում էր ֆինանսավորման հարցերը՝ նյութական միջոցների հայթայթումը և անհրաժեշտ ծախսերը: Շահան Նաթալին և Ա. Սաչակյանը Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» թերթի աշխատակիցներ էին, իսկ թերթի խմբագրատունը՝ Հատուկ գործի շտաբ-կայանը:

**Քանի որ Հատուկ գործը խիստ գաղտնի գործողություն էր, ուստի տարիներ շարունակ գաղտնազերծված չէին նրա կազմակերպիչները, անդամները և գործին առնչվող ցանկացած տեղեկություն:**

Հատուկ գործի մասնակիցներից Արամ Երկանյանի հուշագրությունը<sup>16</sup> հրատարակվեց միայն 1949 թվականին՝ նրա մահվանից 15 տարի անց, որին հաջորդեցին նրա գործընկերների՝ Սողոմոն Թեհլիրյանի<sup>17</sup>, Միսաք Թորլաքյանի<sup>18</sup> և Արշավիր Շիրակյանի<sup>19</sup> հուշագրությունների հրատարակությունները: Դրանից հետո միայն երիտթուրքերի՝ հայերի կողմից իրագործված մահապատիժները հայության մի հատվածի՝ սփյուռքահայության շրջանում դիտարկվեցին որպես Հատուկ գործի՝ «Նեմեսիս» գործողության մաս, մինչդեռ Խորհրդային Հայաս-

12 Տե՛ս **Derogy J.**, Resistance and Revenge: The Armenian Assassination of the Turkish Leaders Responsible for the 1915 Massacres and Deportations, Preface by **Gérard Chaliand**, Translated by **A. Am. Berrett**, New Brunswick (USA) and London (UK), “Transaction Publishers”, 1990, էջ 59:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 60, տե՛ս նաև **Bogosian E.**, Operation Nemesis. The assassination plot that avenged the Armenian genocide, New York, Boston, London, “Little, Brown and company”, 2015, էջ 136:

14 Քանի որ Արմեն Գարոն առողջական խնդիրներ ուներ, 1921 թ. վերջից Հատուկ գործը փաստացի ղեկավարում էր Սեպուհը՝ Արշակ Ներսիսյանը: Տե՛ս **Mesrobian MacCurdy M.**, Sacred Justice; The Voices and Legacy of the Armenian Operation Nemesis, with a foreword by Gerard Libaridian, Translations by Arsine Oshagan, New Brunswick (USA) and London (UK), “Transaction Publishers”, 2016, էջ 120:

15 **Շահան Նաթալի** (Հակոբ Տեր-Հակոբյան) (1884 թ., Հուսեյնիկ - 1883 թ., Մասաչուսեթս)՝ հայ հասարակական-քաղաքական գործիչ, գրող, փիլիսոփա, կեղծանունը՝ Նեմեսիս:

16 «Գիրք մատուցման և հատուցման. յուշարձան Արամ Երկանյանի», Լոս-Անճելէս, տպ. «Պայքար», 1949:

17 Տե՛ս **Թեհլիրեան Ա.**, Վերլուծումներ (Թալէաթի ահաբեկումը), գրի առաւ: **Վահան Մինախորեան**, Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1953:

18 Տե՛ս **Թորլաքեան Մ.**, Օրերուս հետ, Բ իրատարակութիւն, Պէյրուք, 1982, տպ. «ԱՅԿ-Ճընմէլգէ», 1963:

19 Տե՛ս **Շիրակեան Ա.**, Կտակն էր մահատակներուն, «Համազգային», Պէյրուք, 1965, էջ 344:

տանում գործող խիստ գրաքննության հետևանքով հասարակությունը հիմնականում իրազեկված չէր այդ մասին: Իրավիճակը փոխվեց Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ նորանկախ Հայաստանում սկսեցին տպագրվել հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների մասին գիտահանրամատչելի գրքեր, այդ թվում նաև՝ «Նեմեսիս» անդամների հուշագրությունների վերահրատարակությունները<sup>20</sup>:

Սակայն հարկ է նշել, որ հայ պատմագիտության մեջ Հատուկ գործի («Նեմեսիս» գործողության) վերաբերյալ համապարփակ հետազոտություններ դեռևս չկան: Օտարազգի ուսումնասիրողներից խնդրին առաջին անգամ անդրադարձել է ֆրանսիացի ուսումնասիրող, լրագրող Ժակ Դեռոժին, որը, հետազոտելով ՀՅԴ Բոստոնի Կենտրոնական արխիվը, 1986 թ. ֆրանսերենով լույս է ընծայել իր գիրքը<sup>21</sup>: Մի քանի տարի անց Ա. Բերետի կողմից այն թարգմանվել է նաև անգլերեն, սակայն հրատարակվել է փոփոխված վերնագրով<sup>22</sup>:

Հատուկ գործի վերաբերյալ կարևոր ուսումնասիրություն է Մարիան Մերոբյան-Մաքքրոդիի՝ անգլերենով հրատարակված գիրքը՝ Ժիրայր Լիպարիտյանի առաջաբանով<sup>23</sup>: Այդ գրքում զետեղված են Հատուկ գործին առնչվող՝ երբևէ չհրատարակված աղբյուրագիտական հարուստ նյութեր՝ նամակներ, փաստաթղթեր, լուսանկարներ, որոնք հայտնաբերվել են հեղինակի մորական պապի՝ Ահարոն Սաչակյանի<sup>24</sup> արխիվից վերջինիս մահվանից ավելի քան քառորդ դար անց՝ 1990 թ., և հրատարակվել 2016 թ.:

### 3. Ոճրագործների ցուցակը

Հատուկ գործը կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր ունենալ գործողությունների հստակ ծրագիր, որի առաջնահերթ նպատակներից էր կազմել հայերի տեղահանություններն ու կոտորածներն իրագործողների ցուցակը: Դեռևս 1918 թ. դեկտեմբերին ՀՅԴ անդամ, իրավաբան Մանուկ Համբարձումյանի<sup>25</sup> կողմից կազմվում է հայերի կոտորածներն ու տեղահանությունը կազմակերպած և իրականացրած

20 Պետրոս Տեր-Պողոսյանը, Ստեփան Զատիկյանն ու Արտաշես Չերքյանը չհասցրին անծամբ գրել իրենց սխրագործության Ջեմալ փաշայի ահաբեկման մասին, որը նույնպես կազմակերպվել էր ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումն իրագործելու համար, բայց ոչ թե Հատուկ գործի շրջանակներում, այլ ՀՅԴ Կրաստանի կենտրոնական կոմիտեի ղեկավարությամբ: Ավելի մանրամասն տես Ալվազյան Մ., Ովքեր են սպանել Ջեմալ փաշային, Եր., «Ֆենոմեն», 2016:

21 Տես Derogy J., Operation Nemesis: Les vengeurs arméniens, Broché, «Fayard», 1986:

22 Տես Derogy J., Resistance and Revenge, The Armenian Assassination of the Turkish Leaders Responsible for the 1915 Massacres and Deportations: Preface by Gérard Chaliand, Translated by A. Am. Berrett, New Brunswick (USA) and London (UK), «Transaction Publishers», 1990:

23 Տես Mesrobian MacCurdy M., նշվ. աշխ.:

24 Սաչակյան Ահարոն (1879 թ., Մալաթիա, Օսմանյան կայսրություն - 1964 թ., Սիրակուզա, ԱՄՆ)՝ ՀՅԴ գործիչ, «Հայրենիք» թերթի (Բոստոն) աշխատակից, Հատուկ գործի ֆինանսական հարցերով պատասխանատու:

25 Համբարձումյան Մանուկ (1882 թ., Սեբաստիա - 1963 թ., Ֆրեզնո)՝ ՀՅԴ ԱՄՆ-ի կենտրոնական կոմիտեի անդամ, «Հայրենիք» պարբերականի խմբագիր (1919 թ.): Ավարտել է «Անատոլիա» քոլեջը (1907 թ.), Ելի (1913 թ.) և Հարվարդի համալսարանները (1917 թ.):

100 ոճրագործների անվանացանկ<sup>26</sup>, որը թարգմանաբար ներկայացվում է դաշնակից երկրների ներկայացուցիչներին<sup>27</sup>: Մ. Համբարձումյանը ԱՄՆ-ից ժամանած չորս պատվիրակների հետ 1919 թ. աշնանը մասնակցել է նաև Երևանում գումարված ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովին<sup>28</sup>: Հետևաբար կարող ենք ենթադրել, որ այդ ժողովում ներկայացված ցուցակը կազմել է հենց Մ. Համբարձումյանը: Այս ցուցակի ձեռագիր պատճենը հայտնաբերվել է Ա. Սաչակլյանի արխիվում թուրք ոճրագործների 65 լուսանկարների և թերթերից կտրված թերթոնների հետ<sup>29</sup>:

Ժ. Դեռոժին գտնում է, որ եղել են տարբեր ցուցակներ: Դրանցից մեկը, ըստ ֆրանսիացի հետազոտողի, Մ. Համբարձումյանի՝ դաշնակից երկրների համար կազմած 100 ոճրագործների ցուցակն է, իսկ մյուսը՝ «ներքին» ցուցակը, որի նախնական տարբերակում, նրա պնդմամբ, ընդգրկված էր 650 ոճրագործի անուն, որոնցից ի վերջո ընտրվել են միայն 41-ը<sup>30</sup>:

Ուշագրավ է այն փաստը, որ, բացի հայերի կողմից կազմված թուրք ոճրագործների՝ մեզ հայտնի ցուցակներից, եղել են նաև համանման այլ ցուցակներ: Մասնավորապես հետազոտող Մելինե Անումյանը նշում է, որ Մեծ Բրիտանիայի կողմից Օսմանյան կայսրությանը ներկայացված հանցագործների «սև ցուցակում» առանձնացվել է 61 անձ, որոնք կասկածվում էին հայերի տեղահանությունը և ոչնչացումը կազմակերպելու մեջ: Թուրքական կառավարությանը ներկայացված ֆրանսիական «սև ցուցակում» նշվում էր 12 անձ, որոնց անունները նույնպես համընկնում էին բրիտանական ցուցակներում նշվածներին: Բացի այդ՝ անգլիամետ իթիլաֆական կառավարության վարչապետ Դամադ Ֆերիդին հայերի ջարդերի պատասխանատուների ցուցակներ են ներկայացրել Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն Եղիայանը և Մխիթարյան միաբանության անդամները<sup>31</sup>:

Ուսումնասիրելով Ա. Սաչակլյանի արխիվից հայտնաբերված ցուցակը՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ դրանում ընդգրկված ոճրագործները միայն Օսմանյան կայսրության բարձրաստիճան պաշտոնյաներ, իթիլաֆատի կենտրոնական կամ տարածքային մարմինների անդամներ են: Մինչդեռ ուսումնասիրողները հաճախ Հատուկ գործին («Նեմեսիսին») կցում են նաև ադրբեջանցի ոճրագործների և երիտթուրքերին աջակցած հայ դավաճանների մահապատիժները: Բայց քանի որ վերոնշյալ ցուցակում ադրբեջանցի գործիչների և հայ դա-

26 Ոճրագործների անվանացանկը տես Mesrobian MacCurdy M., նշվ. աշխ., էջ 143-147:

27 1919 թ. հունվարին Փարիզի Խաղաղության կոնֆերանսի նախօրեին, ստեղծվեց Պատասխանատվության և պատժամիջոցների հանձնաժողով, որի առաջին ենթահանձնաժողովը (այն հայտնի է նաև **Տասնհինգի հանձնաժողով** անունով), Հաազայի 4-րդ կոնվենցիայի պահանջներին համապատասխան, իրավասություն ստացավ բացահայտելու և պատժելու պատերազմական հանցագործներին: Մանրամասն տես Dadrrian V., The History of the Armenian Genocide, էջ 304:

28 Տես Mesrobian MacCurdy M., նշվ. աշխ., էջ 116:

29 Տես նույն տեղում, էջ 116-117: Տես նաև Derogy J., Resistance and Revenge, էջ 59:

30 Տես Derogy J., Resistance and Revenge, էջ 59:

31 Տես Անումյան Մ., նշվ. աշխ., էջ 47:

վաճանների անուններ չկան, կարող ենք ենթադրել, որ այդ ոճրագործների համար եղել է առանձին ցուցակ, կամ էլ մահապատժի իրագործման հրահանգները տրվել են հանպատրաստից:

Ասվածին հավելենք, որ ինքը՝ Սողոմոն Թեփիրյանը<sup>32</sup>, անդրադառնալով հայ մատնիչ-դավաճան Հարություն Մկրտչյանի<sup>33</sup> սպանությանը, գրում է, որ նրան մահապատժի ենթարկելը իր սեփական նախաձեռնությունն է եղել. «Երկար ճանապարհին միակ միտքս այդ նոր հրեշն էր՝ մատնիչ Յարությունը. անհրաժեշտ չէ՞ր վրէժխնդրութեան առաքելութիւնս, որ վաղուց դարձել էր գոյութեանս նպատակ, նրանից սկսել...»<sup>34</sup>: Ս. Թեփիրյանը դավաճանի գործունեությանն ու նրա բնակության վայրին ծանոթանում է Կ. Պոլսում 1919 թ. սկզբին «Ճակատամարտ» թերթի աշխատակից Երանուհի Դանիելյանի միջոցով, որը հետագայում առանցքային դերակատարություն է ունենում Թեփիրյանին **Հատուկ գործում** ներգրավելու հարցում<sup>35</sup>: Որոշ ժամանակ հետապնդելով իր գոհին, ճշտելով նրա ինքնությունը՝ երիտասարդ վրիժառուն ի վերջո իրագործում է սպանությունը<sup>36</sup>: Թեև Թեփիրյանը կոնկրետ չի նշում սպանության օրը, սակայն, դատելով նրա կողմից իրադարձությունների շարադրման ընթացքից, կարող ենք եզրակացնել, որ դեպքը տեղի է ունեցել 1919 թ. մարտի վերջին<sup>37</sup>: Այսինքն՝ հայ դավաճանի սպանությունը չի կարող համարվել **Հատուկ գործի** մաս, քանի որ այն ժամանակագրորեն ավելի վաղ է կատարվել, քան գործի է դրվել «Նեմեսիս» գործողությունը: Բացի այդ, հենց Թեփիրյանի վկայությամբ, այն իր սեփական նախաձեռնությունն է եղել և ոչ թե ուղղորդվել որևէ մեկի կողմից: Սակայն մատնիչի սպանությունը նպաստեց նրան, որ Ս. Թեփիրյանն ընդգրկվեց Հատուկ գործի մեջ: Հ. Մկրտչյանի սպանությունից հետո Թեփիրյանը 1919 թ. նոյեմբերին մեկնում է Փարիզ, որտեղ մնալով շուրջ մեկ տարի՝ 1920 թ. Խոկտեմբերին ուղևորվում է Բոստոն՝ ստանձնելու հատուկ առաքելությունը՝ Հատուկ գործի առանցքային գործողության՝ Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Թալեաթի մահապատժի իրագործումը:

#### 4. Սողոմոն Թեփիրյանը

Սողոմոն Թեփիրյանը (1896-1960 թթ.) իրավամբ Հատուկ գործի («Նեմեսիս» գործողության) ամենախայտնի դեմքն է, և նրան կարելի է համարել հայոց վրիժա-

32 Ս. Թեփիրյանի կենսագրության մասին տե՛ս **Խանումյան Գ.**, Սողոմոն Թեփիրյան-120 /<http://www.genocidemuseum.am/arm/soghomon-tehliryan.php> (մուտք՝ 06.11. 2019):

33 Հարություն (Արթին) Մկրտչյան՝ թուրքական զաղտնի ոստիկանության աշխատակից, լրտես: Նրա կազմած «սև ցուցակով» Կ. Պոլսում 1915 թ. ապրիլի 24-ին սկսվեցին հայ մտավորականության ձերբակալությունները:

34 **Թեփիրյան Ս.**, նշվ. աշխ., էջ 190:

35 Տե՛ս նույն տեղում, էջ 235:

36 Տե՛ս նույն տեղում, էջ 205-206:

37 Տե՛ս նույն տեղում, էջ 199, տե՛ս նաև **Mesrobian MacCurdy M.**, նշվ. աշխ., էջ 136:

ռության խորհրդանիշ: Դա պայմանավորված է ոչ միայն այն բանով, որ նրա թիրախն ամենահայտնի ոճագործն էր՝ Թալեաթը, այլև նրա դատավարության՝ հասարակական լայն հնչեղություն ունենալու փաստով: Հաճախ «Նեմեսիս» գործողությունը հանրության շրջանում անձնավորվում է հենց Սողոմոնի կերպարով: Ի դեպ, եթե Սփյուռքում դեռ 1920-ական թվականներից Սողոմոն Թեհլիրյանին ճանաչում էին որպես հերոս, ապա իրավիճակը բոլորովին այլ էր Խորհրդային Հայաստանում: Սիլվա Կապուտիկյանի վկայությամբ՝ 1965 թ. ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին, Երևանում տեղի ունեցած ցույցի մասնակիցները, ի թիվս այլ պաստառների, տանում էին նաև Ս. Թեհլիրյանի պատկերով նկարը<sup>38</sup>: Սակայն Խորհրդային Հայաստանում հասարակության լայն շերտերի համար նրա գործունեությունը մինչև 1990-ական թվականների սկիզբը գրեթե անհայտ էր: Միայն նորանկախ Հայաստանում հնարավոր դարձավ լայնորեն վերհանել «Նեմեսիսի» մոռացված հերոսների անունները: Հենց այս շրջանում տպագրվեց Ս. Թեհլիրյանի դատավարության սղագրությունը<sup>39</sup>: Ի դեպ, այդ հրատարակության մեջ Ս. Թեհլիրյանի ազգանունը սխալ ձևով է գրված՝ **Թեհլերյան**: Թեհլիրյանի ազգանվան գրության ոչ ճիշտ ձևն այսօր էլ շատ տարածված է, հատկապես՝ հանրագիտարաններում ու համացանցում: Մինչդեռ դատավարության ռուսերեն թարգմանության մեջ այն ճիշտ է տառադարձված՝ **Тейлirian**<sup>40</sup>: 1993 թ. Ս. Թեհլիրյանի ազգական (հորեղբոր ծոռ), Բյուրականի աստղադիտարանի աշխատակից Արա Օսկանյանը և նրա գործընկեր Զ. Ղարիբյանը արևելահայերենի են փոխադրել Ս. Թեհլիրյանի «Վերհիշումներ»-ը՝ ընդգծելով հրատարակչի այն դիտարկումը, որ «...Թեհլերյան ազգանվան փոխարեն առաջարկում է Թեհլիրյան, ինչպես դիմել և այսօր էլ դիմում են միմյանց հենց իրենք՝ բոլոր Թեհլիրյանները»<sup>41</sup>:

Հարկ է նշել, որ մեզանում հաճախ շրջանառության մեջ են դրվում Ս. Թեհլիրյանի կենսագրության այնպիսի դրվագներ, որոնք վերցված են նրա դատավարության սղագիր զեկույցից, սակայն չեն համապատասխանում իրականությանը: Օրինակ՝ այն, որ նա իբր ականատես է եղել իր ընտանիքի անդամների սպանությանը, տեղահանվել է հայրենի քաղաքից և այլն:

Սողոմոնի կենսագրության վաղ շրջանի՝ 1914-1921 թթ. իրադարձությունների ուսումնասիրության լավագույն աղբյուրը Ս. Թեհլիրյանի՝ Վահան Մինախորյանի<sup>42</sup>

38 Տե՛ս **Թեհլիրյան Ս.**, Վերհիշումներ. Թալեաթի ահաբեկումը, գրի առավ **Վահան Մինախորյանը**, Եր., Հայաստանի ԳԱԱ հրատ., 1993, էջ 3:

39 Տե՛ս Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը (սղագրություն), Եր., «Արևազուն», 1990:

40 Տե՛ս Судебный процесс Талаата паши: стенографический отчет:

41 **Թեհլիրյան Ս.**, նշվ. աշխ., էջ 3:

42 **Մինախորյան Վահան** (1884 թ., Գանձակ - 1946 թ., Բելգրադ)՝ քաղաքական գործիչ, էսէռ, 1918-1919 թթ.՝ ՀՀ Խորհրդարանի անդամ, 1920 թ. վերջին՝ հանրային կրթության նախարար, Ալեքսանդրապոլի հայ-թուրքական բանակցություններում ՀՀ պատվիրակության անդամ: 1921 թ. մասնակցել է Փետրվարյան ապստամբությանը, անցել Պարսկաստան, այնուհետև՝ Պրահա, 1934-1946 թթ. հաստատվել է Բելգրադում:



կողմից գրի առնված հուշագրությունն է<sup>43</sup>: Ուշագրավ է այն փաստը, որ Վ. Մինախորյանը մահացել է Բելգրադում 1946 թ.<sup>44</sup>, իսկ Թեհլիրյանի՝ նրա կողմից կազմված հուշագրությունը հրատարակվել է 1953 թ. Կահիրեում: Այսինքն՝ հուշերը գրի են առնվել հրատարակությունից առնվազն 7-8 տարի առաջ: Թեև հուշագրությունը հրատարակվել է Թալեաթի մահապատժից 32 տարի անց, այնուամենայնիվ, Թեհլիրյանը չի գաղտնազերծում գործողության որոշ մասնակիցների անունները (երբեմն ստեղծելով կեղծանուններ կամ անվան և ազգանվան տառերից կազմված նոր անուններ, օրինակ՝ Հրափ (Հրաչ Փափազյան - Գ. Խ.), Յազոր (Հակոբ Ջորյան - Գ. Խ.)<sup>45</sup>, Վազա (Վահան Չաքարյան - Գ. Խ.)<sup>46</sup>:

Թեհլիրյանի կենսագրության կարևոր դրվագը՝ Բեռլինի բանտում անցկացրած օրերը և մտորումները, ներկայացված է նրա գրառումներում, որոնք կինը՝ Անահիտ Թաթևկյանը, ամուսնու մահվանից տարիներ անց՝ 1970-ական թվականներին, բերել է Խորհրդային Հայաստան և պահ տվել Ազգային արխիվին<sup>47</sup>:

## 5. Սողոմոնը և Թալեաթը

Նախքան Հատուկ գործի մեջ ներգրավվելը Ս. Թեհլիրյանը, չնայած երիտասարդ տարիքին, անցել էր մարտական հարուստ ուղի՝ դառնալով ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչների Ջորավար Անդրանիկի, Սեբաստացի Մուրադի, Կայծակ Առաքելի, Սեպուհի և այլոց զինակից ընկերը: Ընդ որում, մարտական բազմաթիվ գործողությունների մասնակցելուց բացի (որոնցում նույնիսկ վիրավորվել է)<sup>48</sup>, Ս. Թեհլիրյանը 1916-1917 թթ. զբաղվել է նաև որբահավաք գործունեությամբ, ինչը տակավին նրա կենսագրության չլուսաբանված և պատշաճ ուշադրության չարժանացած դրվագներից է: 1916 թ. ամռանը նրա ավագ ընկերը՝ Սեբաստացի Մուրադը, ազդարարել էր «մեկ հայ-մեկ ոսկի» կարգախոսը, որը կարճ ժամանակահատվածում վերածեց համահայկական փրկության ծրագրի<sup>49</sup>: Դրանից ոգեշնչվելով Ս. Թեհլիրյանն իրականացնում է ազգանվեր կարևոր առաքելություն. Երզնկայում հայտնաբերում է մահմեդականների տներում բռնի պահվող և անմարդաբնակ վայրերում քարանձավներում, անտառներում, լճված ու ավերակ տներում թաքնված անապաստան ու

43 Տե՛ս Թեհլիրեան Ս., նշվ. աշխ.:

44 Այդ տարիներին Ս. Թեհլիրյանը նույնպես ապրում էր Բելգրադում:

45 Տե՛ս Բեշիշյան Ս., Նեմեսիսի զինվորը Հակոբ Ջորյան, «Հայ զինվոր», Եր., N 20 (987), 23.05.2013:

46 Մանրամասն տե՛ս Մատթեոսեան Վ., ՀԱՅԿՕ Թալեաթի աղաբեկումին վերջին անձանք մասնակիցը. «Բանբեր Մատենադարանի», Եր., 2014, N 21, էջ 249-260:

47 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 314, ց. 24, գ. 2:

48 1918 թ. ապրիլի 6-ին Կարաթուրոյի կիրճում Սարիղամիշի մոտ, Թեհլիրյանը հրագենային վնասվածք է ստանում և ապաքինվելու համար տեղափոխվում Թիֆլիս: Տե՛ս Թեհլիրեան Ս., նշվ. աշխ., էջ 140:

49 Մանրամասն տե՛ս Խանումյան Գ. Վ., Հայոց ցեղասպանության տարիներին «մեկ հայ-մեկ ոսկի» փրկության առաքելության հարցերի շուրջ, «Ցեղասպանագիտական հանդես», Եր., 2017, N 5 (2), էջ 35 - 47:

ծնողագուրկ երեխաների և հանձնում հայկական որբանոցների խնամքին: Նա Երզնկայում հայ կամավորականներից կազմված որոնողական խմբի անդամ էր և ստացել էր «որբեր հավաքողի պաշտոն»<sup>50</sup>:

Թալեաթին որպես հայերի կոտորածների հիմնական կազմակերպիչ թիրախավորելու և ոչնչացնելու մտահոգումը Ս. Թեհլիրյանի մոտ ծագել է 1916 թ., երբ երիտասարդ կամավորականը, իր զինակից ընկերների հետ մտնելով հայրենի Երզնկա քաղաքը, տեսնում է հայրական տունը դատարկված, թալանված և ավերակ դարձած: Հոգեկան ծանր ապրումներից նա կորցնում է գիտակցությունը և ունենում սպանված մոր տեսիլքը<sup>51</sup>: Թեհլիրյանը հիշում է. «...Ու իմ առջեւ դարձեալ պատկերում է Թալեաթի փքուն, ինքնագոհ դէմքը, որ մթութեան մէջ կարծես վեր է հանում բրդոտ թաթը... Ա՛խ, կտրել այդ ձեռքը ու թողնել, որ արինաքամ լինի հրէշը, որ կարող լինի զգալ ու հասկանալ իր կատարած ոճիրի սհաւոր չափերը... Հաատա՛լ արդեօք, որ մի օր կլինի արդար դատաստան...»<sup>52</sup>: Թալեաթին նա, ինչպես նաև իր ժամանակակիցներից շատերը համարում էին Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ և կոտորածների պատասխանատու: Ի դեպ, մոր տեսիլքը դատավարության ժամանակ օգտագործվեց դատապաշտպանների կողմից՝ նրա պաշտպանությունն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Ս. Թեհլիրյանը 1918 թ. վերջին՝ պատերազմի ավարտից անմիջապես հետո, երբ իր կորցրած հարազատներին գտնելու հույսով թերթերում հայտարարություն տալու համար ժամանել էր Կոստանդնուպոլիս, փորձեց գործնական քայլեր անել Թալեաթի սպանությունն իրագործելու ուղղությամբ: Աջակցություն ստանալու նպատակով նա դիմեց անգամ աքսորից Կ. Պոլիս նոր վերադարձած Զավեն պատրիարքին՝ ստանալով վերջինիս մերժումը<sup>53</sup>:

\*

\*

\*

ՀՅԴ-ի կողմից ստեղծված Հատուկ մարմինն արդեն 1920 թ. կեսերից անցել էր գործուն քայլերի, այն է՝ հետախուզական խմբերի միջոցով հայտնաբերել դատավարությունից խուսափած երիտթուրք հանցագործներին, որոնք կեղծ անձնագրերով, փոփոխված արտաքինով, ծպտյալ բնակություն էին հաստատել հիմնականում եվրոպական երկրներում, և ընտրել նրանց մահապատիժն իրականացնելու համար համապատասխան թեկնածուների: Ինչպես արդեն վերը նշվեց, մատնիչ Հ. Մկրտչյանի սպանությունը նպաստեց, որ Թեհլիրյանն ընդգրկվի Հատուկ գործի կարևոր առաքելության մեջ: Այս կապակցությամբ նա գրում է. «Մատնիչի մահը

50 Տե՛ս Թեհլիրեան Ս., նշվ. աշխ., էջ 75:

51 Տե՛ս նույն տեղում, էջ 95:

52 Նույն տեղում, էջ 75:

53 Տե՛ս նույն տեղում, էջ 212, 222:

Պոլսոյ հայութեան մէջ առաջ բերեց ընդհանուր ցնծութիւն: Կուսակցութեան շրջաններում հարց բարձրացաւ հետամուտ լինելու մեծ մարդասպաններին, յարաբերութեան մէջ մտնելու այդ առթիւ Ռուսաստանի, Անդրկովկասի, Բերլինի, ժընեւի կուսակցական մարմինների հետ»<sup>54</sup>: Սակայն գործի մեջ Թեիլիոյանին ներգրավելու հարցում իրենց միջնորդութիւններով ներդրում ունեցան նաև նրա վաղեմի ծանոթներ Երանուհի Դանիելյանը և Համոն (Համազասպ Բարաղամյանը)<sup>55</sup>, ովքեր Հատուկ գործի մեջ ներգրավված անձինք էին:

1920 թ. հոկտեմբերին ստանալով Համոյի նամակը՝ Թեիլիոյանն ուղևորվում է ԱՄՆ և Բոստոնում հանդիպում Արմեն Գարոյի հետ, որից ստանում է համապատասխան հրահանգներ, Թալեաթի և Բեռլինում գտնվող նրա թուրքական շրջապատի լուսանկարները: 1920 թ. դեկտեմբերի 3-ին Թեիլիոյանը ժամանում է Բեռլին՝ իբրև ուսանող:

## 6. Թալեաթի ահաբեկումը

Սողոմոն Թեիլիոյանն անձամբ չէր ճանաչում Թալեաթին, երբևիցե երես առ երես չէր հանդիպել նրան, բացարձակապես չէր տիրապետում գերմաներենին: Նրան վստահված կարևոր առաքելությունն իրագործելու համար Բեռլինում սպասում էր արհեստավարժ թիմը, որն արդեն կատարել էր հետախուզական և կազմակերպչական զգալի աշխատանք: Ձեռք բերված տեղեկություններից պարզ էր դարձել, որ Եվրոպա ճողոպրած ու դատավարությունից խուսափած երիտթուրքերի շրջանում<sup>56</sup> մեծ ոգևորություն էին առաջացրել Մուստաֆա Քեմալի ռազմական և քաղաքական հաջողությունները Թուրքիայում: Կիլիկիայում մարում էին հայերի ինքնապաշտպանության վերջին օջախները, իսկ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը խորհրդայնացվել էր. երկրում հաստատվել էր նոր՝ բոլշևիկյան իշխանություն: Ուստի ռազմա-քաղաքական նոր շրջադարձը պահանջում էր հնարավորինս արագ և գրագետ գործել: Բեռլինյան գործողության մեջ ներգրավված էր Հրափը (Հրաչ Փափազյանը)<sup>57</sup>, որը, ծնունդով լինելով Բուրսայից (Օսմանյան կայսրություն), փայլուն տիրապետում էր թուրքերենին և մուսք էր գործել Բեռլինում ծպտյալ ապրող երիտթուրքերի շրջանակ, մասնավորապես՝ Տրապիզոնի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմիի որդու «մտերիմ ընկերն էր»: Նա գործում էր Մեհմեդ Ալի կեղծանունով և արժեքավոր տեղեկություններ էր փոխանցում ճողոպրածների գործու-

54 Նույն տեղում, էջ 207:

55 **Բարաղամյան Համազասպ** - հայ կամավորական, «Հորիզոն» (Երևան) թերթի թղթակից, «Հայրենիք» (Բոստոն) թերթի խմբագրության անդամ, ԱՄՆ-ում ՀՅԴ ԿԿ քարտուղար, Հատուկ գործի մեջ ներգրավված անձ:

56 Բեռլինում ծպտյալ ապրում էին Թալեաթը կնոջ հետ, Ջեմալ Ազմին ընտանիքի հետ, Պոլսի նախկին ոստիկանապետ Բեդրի բեյը, Իսմայիլ Հազգը բեյը և Բեհաէդդին Շաքիրը:

57 Հրաչ Փափազյանի մասին տես **Սապունձեան Ջ.**, Հրաչ Փափազեան. Յեղափոխական եւ ազգային մեծ գործիչ (կեանքն ու գործը), Պէյրուք, 1987:

նեության վերաբերյալ<sup>58</sup>: Հետախուզական խմբի մյուս անդամներն էին Վազան (Վահան Չաքարյանը)<sup>59</sup>, Յազորը (Հակոբ Զորյանը), որն առաջինն էր բացահայտել Թալեաթին Բեռլինում և գերմանական դատարանում դարձավ Ս. Թեհլիրյանի թարգմանիչը, Հայկոն, որին հետազոտող Վարդան Մատթեոսյանը նույնացրել է ՀՅԴ անդամ Հայկ Տեր-Օհանյանի հետ<sup>60</sup>, և Բեռլինում ՀՀ ներկայացուցիչ, փոխհյուպատոս Լիպարիտ Նազարյանը:

Թալեաթը Բեռլինում փոխել էր անձնական տվյալները և կնոջ հետ Ալի Սալիի բեյ անունով ապրում էր Հարդենբերգ փողոցում վարձակալած ինը սենյականոց շքեղ բնակարանում: Ըստ լեգենդի՝ Ալի Սալիիը սնանկացած նախկին վաճառական էր, ով Բեռլինում արևելյան սրճարան էր աշխատեցնում: Բնակարանը նրա և կնոջ համար վարձակալել էր թուրքական դեսպանատունը: Թալեաթը փոխել էր նաև արտաքին տեսքը. սափրել էր բեղերը և իր սիրելի թուրքական ֆեսի փոխարեն կրում էր եվրոպացուն բնորոշ գլխարկ: Թալեաթի նկատմամբ հետախուզությունը ուղղորդվում էր Բոստոնից, որտեղից պարբերաբար ուղարկվում էին ծածկագրված հեռագրեր: Ս. Թեհլիրյանին հաջողվում է բնակարան վարձել Թալեաթի իջևանած բնակարանի հարևանությամբ և մի քանի օր շարունակ մոտիկից հետևել նրան:

Թալեաթը բացահայտված էր. մանրակրկիտ ստուգված էր նրա ինքնությունը, քանի որ կարևոր էր, որ գործողության ընթացքում պատահական մարդ չտուժի: Նրա մահապատիժն իրագործվեց 1921 թ. մարտի 15-ին՝ Մոսկվայի հակահայկական պայմանագրի կնքման նախորդ օրը: Մահապատիժ իրագործման օրը թերևս պատահական չէր ընտրված, քանի որ ռուս-թուրքական կոնֆերանսում (1921 թ. փետրվարի 26 - մարտի 16), որի արդյունքը Մոսկվայի «Բարեկամության և եղբայրության» պայմանագիրն էր, բոլշևիկներն ու քեմալականներն առանց հայկական կողմի մասնակցության որոշում էին հայկական տարածքների հարցը: Այդ օրը՝ առավոտյան, Բեռլինի Հարդենբերգ փողոցում ժողովրդական վրիժառու Ս. Թեհլիրյանն ատրճանակով գնդակահարում է Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուին՝ Թալեաթ փաշային: Այն, որ սպանվողը Թալեաթն էր, այդ պահին գիտեր միայն Սողոմոնը:

Թեհլիրյանը ձերբակալվեց սպանության վայրում և տեղափոխվեց ոստիկանություն, որտեղ սկսվեց հարցաքննությունը: Քանի որ նա հարցաքննության պահին գրեթե չէր տիրապետում գերմաներենին<sup>61</sup>, իբրև թուրքահպատակի՝ նրան առաջարկեցին հարցաքննվել թուրքերենով: Սակայն Թեհլիրյանի պահանջով հար-

58 Տե՛ս Թեհլիրեան Ս., նշվ. աշխ., էջ 255:

59 Տե՛ս Mesrobian MacCurdy M., նշվ. աշխ., էջ 138:

60 Մանրամասն տե՛ս Մատթեոսյան Վ., նշվ. աշխ., էջ 249-260:

61 Բեռլինում գտնվելու երեք ամիսների ընթացքում Թեհլիրյանը որոշակի քայլեր էր արել գերմաներեն սովորելու ուղղությամբ, սակայն նրա իմացությունը բավարար չէր հաղորդակցության համար:

ցաքննությունը կատարվեց հայ թարգմանչի միջոցով: Նա պնդում էր, որ Թալեաթին սպանել է վրեժից դրդված, գործել է միայնակ և հանցակիցներ չի ունեցել:

«Ալի Սալիհի» դին ճանաչել էր նրա վաղեմի ընկերը՝ Բեհաէդդին Շաքիրը, ով հաստատել էր, որ սպանվածը Թուրքիայի նախկին մեծ վեզիր Թալեաթն է<sup>62</sup>: Թալեաթին հուղարկավորեցին միայն մահվան 5-րդ օրը, քանի որ թուրքական իշխանություններն արգելեցին նրան ամփոփել հայրենիքում: Նախկին դաշնակիցները գերմանացիները, Բեռլինում կազմակերպեցին Թալեաթի ճոխ հուղարկավորությունը. բազմաթիվ ծաղկեպսակներ, տարբեր երկրներից ժամանած թուրքեր, հակահայկական ելույթներ և կոչեր...<sup>63</sup>:

## 7. Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը և Հատուկ գումարը

Ս. Թեհլիրյանի դատավարությունը դարձավ **Հատուկ գործի** ամենահնչեղ էջը: Այն դարձավ նաև քաղաքական հարթակ՝ հայկական կոտորածների մասին բարձրաձայնելու և միջազգային հանրության ուշադրությունը վերստին այդ հարցի վրա հրավիրելու համար<sup>64</sup>: Անհրաժեշտ էին զգալի նյութական միջոցներ՝ Գերմանիայի լավագույն դատապաշտպաններին վարձելու և Թեհլիրյանի պաշտպանական գործը պատշաճ կազմակերպելու համար: Այդ միջոցները հայթայթվում էին **Հատուկ գումարի** ֆոնդից, որը ստեղծվել էր դեռևս 1920 թ.: Շահան Նաթալին այն անվանում էր «Վրեժի ֆոնդ»<sup>65</sup>: Ա. Սաչակյանի անձնական արխիվում **Հատուկ գումարի** վերաբերյալ հանդիպում ենք ինչպես դրամական նվիրատվությունների մասին նշումների, այնպես էլ կատարված ծախսերի հաշվետվությունների<sup>66</sup>: Ինչպես նշում է ամերիկահայ իրավաբան Վարդգես Եղիայանը, համայն հայության կողմից այդ նպատակի համար հանգանակվեց շուրջ 700.000 մարկ: Դրանից բացի՝ այդ օրերին Փարիզում Խաղաղության կոնֆերանսին մասնակցող հայկական պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի կողմից կազմակերպված հանգանակության շնորհիվ հավաքվեց շուրջ 300.000 մարկ: Միայն դատավարության ընթացքում ծախսվեց 306.484 մարկ<sup>67</sup>:

Ս. Թեհլիրյանին դատարանում պաշտպանելու էին Գերմանիայի անվանի իրավաբաններ Ադոլֆ ֆոն Գորդոնը՝ իրավական գաղտնի խորհրդական, Յոհաննես Վերթաուերը՝ իրավական խորհրդական, և Նիմայերը՝ Քիլի համալսարանի

62 Տե՛ս Թեհլիրեան Ս., նշվ. աշխ., էջ 335:

63 Տե՛ս նույն տեղում, էջ 338:

64 Ս. Թեհլիրյանի դատավարության մասին մանրամասն տե՛ս u Hoffman T., New Aspects of the Talaat Pasha Court case, "Armenian Review", Winter, 1989, vol. 42, N 4/168:

65 Տե՛ս Mesrobian MacCurdy M., նշվ. աշխ., էջ 129:

66 Տե՛ս նույն տեղում, էջ 216-219:

67 Տե՛ս Yeghiayan V., The case of Soghomon Tehlirian, 2-nd edition, "Center for Armenian remembrance (CAR) ", Glendale, 2006, էջ xxvii:

իրավագիտության բաժնի պրոֆեսոր: Յուրաքանչյուր դատապաշտպանի վճարվեց 75.000 մարկ<sup>68</sup>:

Դատապաշտպանները Թալեաթի հանցանքը հիմնավորելու համար օգտագործեցին ժամանակին ուղարկված բնօրինակ հեռագրեր<sup>69</sup>, որոնցում Թուրքիայի ներքին գործերի նախկին նախարարը տալիս էր հայերի բնաջնջման և տեղահանության հրամաններ: Դատավարության ընթացքում (Բեռլին, 2-3-ը հունիսի 1921 թ.) ցուցմունք տվեցին գերմանացի բարձրաստիճան սպա Լիման ֆոն Սանդերսը, հայտնի հասարակական գործիչ, հայասեր Յոհաննես Լեփսիուսը, ցեղասպանությունը վերապրած հայեր, այդ թվում Գրիգորիս Պալաքյանը, որի հետ դատավարության ավարտից հետո Թեհլիրյանը մեկնեց Մանչեստր<sup>70</sup>: Իրավական առումով Թեհլիրյանի պաշտպանությունը հիմնված էր Գերմանիայի քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի վրա, որը սահմանում էր. «Պատժելի արարք չկա, եթե արարքը կատարելու պահին հանցագործը գտնվել է անգիտակից վիճակում կամ հոգեկան գործունեության պաթոլոգիական խախտում ունի, որի պատճառով բացառվում է նրա կամարտահայտությունը»<sup>71</sup>: 1921 թ. հունիսի 3-ին երդվյալ ատենակալների վճռով Ս. Թեհլիրյանն ազատ արձակվեց<sup>72</sup>:

Ս. Թեհլիրյանի դատավարությունը հասարակական-քաղաքական մեծ արձագանք գտավ. այն լայնորեն լուսաբանվեց ինչպես ժամանակի եվրոպական, ամերիկյան ու հայկական մամուլում, այնպես էլ գերմանացի և թուրք լրագրողների կողմից:

Ի դեպ, Թեհլիրյանի դատավարության հաջորդ օրը, Ազգային պատվիրակության ներկայացուցիչը նամակով հայտնում է Փարիզի ոստիկանապետին, որ, Կ. Պոլսից ստացած իրենց հավաստի տեղեկությունների համաձայն, Թալեաթի կողմնակիցները նրա մահվան համար վրեժխնդիր լինելու նպատակով Փարիզում նախապատրաստում են Ազգային պատվիրակության ղեկավար Պոռու Նուբար փաշայի մահափորձը<sup>73</sup>:

Հետաքրքիր է այն փաստը, որ Ս. Թեհլիրյանի դատավարությունից շուրջ մեկուկես ամիս անց՝ 1921 թ. հուլիսի 18-ին, Միսաք Թորլաքյանը Կ. Պոլսում ի կատար ածեց Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար Բեհբուդ խան Զիվանշիրի մահապատիժը: Վերջինս պատասխանատու էր 1918 թ. սեպտեմբերին Բաքվի հայության և այնտեղ ապաստանած հազարավոր հայ գաղթականների սպանության համար: Ինչպես Թեհլիրյանը, Թորլաքյանը ևս ձերբակալվեց սպա-

68 Տե՛ս նույն տեղում:

69 Հայերի ոչնչացման հեռագրի հրամանները գերմանական դատարան է ներկայացրել Արամ Անտոնյանը:

70 Տե՛ս Mesrobian MacCurdy M., նշվ. աշխ., էջ 129:

71 <https://lexetius.com/StGB/51,4>, (մուտք 22.11.2019):

72 Տե՛ս Hoffman T., նշվ. աշխ., էջ 47:

73 Տե՛ս ՀԱԱ ֆ. 430, ց. 1, գ. 1169:

նության վայրում: Նրա դատավարությունը տևեց շուրջ 2 ամիս և ավարտվեց հոկտեմբերի 20-ին: Ինչպես Թեհլիրյանի, այնպես էլ այս դեպքում դատարանում պաշտպանությունը շեշտը դրեց այն հանգամանքի վրա, որ Թորլաքյանն ակա՛նատես է եղել իր ընտանիքի՝ Զիվանշիրի հրամանով իրագործված սպանությանը, ինչը, դատարանում ցուցմունք տվող բժշկի վկայությամբ, ընկնավորության առաջացման պատճառ է դարձել: Ինչպես գիտենք, Թեհլիրյանի դատավարության ժամանակ նույնպես շեշտադրվում էին նրա ընկնավորության նուպաները, որոնք հատկապես սրվում էին կոտորածները մտաբերելիս<sup>74</sup>: Անգլիական զինվորական դատարանը Թորլաքյանին անմեղսունակ ճանաչեց և ազատ արձակեց:

Դատավարությունից հետո Ս. Թեհլիրյանը բնակություն է հաստատել նախ Մանչեստրում, ապա՝ Բելգրադում (Սերբիա)՝ իբրև Սարո Մելիքյան<sup>75</sup>: Ունեցել է սեփական բիզնես: Անվան փոփոխությունը պայմանավորված էր նրա և իր ընտանիքի անվտանգության ապահովմամբ: 1953 թ. տեղափոխվել է Կասաբլանկա (Մարոկկո), այնտեղից էլ 1954 թ.՝ Սան Ֆրանցիսկո (ԱՄՆ), որտեղ էլ մահացել է 1960 թ. մայիսի 23-ին (կրում էր Սողոմոն Մելիքյան անունը): Նրա աճյունը հողին է հանձնվել Ֆրեզնոյում:

Անահիտ Թաթևյանի հետ ամուսնությունից Ս. Թեհլիրյանն ուներ 2 որդի՝ Զավենը և Շահենը<sup>76</sup>:

Այսպիսով Սողոմոն Թեհլիրյանի կողմից իրականացված Թալեաթի մահապատիժը Հատուկ գործի ամենահայտնի, սակայն պատմագիտական գրականության մեջ քիչ ուսումնասիրված էջերից է: Նորահայտ աղբյուրների ու նյութերի ուսումնասիրությունը և դրանց համադրումն ու քննությունն արդեն գոյություն ունեցողների հետ Հատուկ գործի գաղտնի ու դեռևս անհայտ ծալքերը բացահայտելու և այն նորովի ուսումնասիրելու նոր դաշտ են ստեղծում:

**Գոհար Վ. Խանումյան** - ունի 4 գիտական հոդված, զբաղվում է Օսմանյան կայսրությունում որբահավաք աշխատանքների հարցերով, ուսումնասիրությունների շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության պատմությունը:

Էլեկտրոնային հասցե՝ goharkhanumian@gmail.com

74 Տե՛ս Derogy J., Resistance and Revenge, էջ xxv:

75 Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, օգոստոս, 1960 թ., էջ 84, տես նաև Հ. Յ. Ղաշնակցութեան բանգարան հիմնադրամ, ֆոնդ 330 դ:

76 Տե՛ս **Խանումյան Գ.**, Սողոմոն Թեհլիրյան-120/ <http://www.genocide-museum.am/arm/soghomon-tehliryan.php> (մուտք՝ 06.11.2019):

## Summary

### **SOLOMON TEHLIRIAN AND THE “NEMESIS” OPERATION**

To the 100th Anniversary of the 9th General Assembly Resolution of ARF Dashnaksutyun on the Special Project

Gohar V. Khanumyan

**Key words** - Soghomon Tehlirian, Special Project (Hatuk Gordz), “Nemesis” operation, Aaron Sachaklian, the Trial of the Young Turks, Armen Garo, Shahan Natali, the 9th General Assembly of Armenian Revolutionary Party (Dashnaksutyun), Ottoman Empire, the perpetrators of the Armenian Genocide, Talaat.

In the given article the renewed vision of the history of the Special Project – “Hatuk Gordz” (known as “Nemesis”) operation is presented as an implementation of the verdicts by the Turkish military tribunal towards the leaders of the Young Turks who had organized the Armenian Genocide. The basis for this approach serves the recently discovered and published archive of the newly revealed member of the Special Project – Aaron Sachaklian, as well as other historical facts. For the examination of the Special Project, the list of the criminals drafted by the 9th General Assembly Resolution of ARF Dashnaksutyun during September 28 – November 2, 1919, as well as other lists of the Young Turk leaders are considered.

It is important to note that for the investigation of the Special Project the author of the given article uses for the first time in the Armenian historiography the works of the contemporary researchers French journalist Jacques Derogy and professor Marian Mesrobian MacCurdy. The article presents unknown episodes of Tehlirian’s biography, who was the most famous figure in the “Nemesis” operation. Although Tehlirian is widely known, his biography is insufficiently presented in the scientific literature. Particularly, Tehlirian’s efforts towards seeking the Armenian orphans during 1916-1917 in his native city of Yerznka (Erzinjan), his involvement in the Special Project in 1920-1921, and uncovering the Turkish crypto criminals in Berlin are presented in the article. along with his companions are presented in this article.

The preparatory work of the judicial procedure of Soghomon Tehlirian is also presented in the article, particularly the activities of the Special Fund (“Hatuk gumar”) created by ARF Dashnaksutsyun for the moneyed assistance to the Special Project. A comparative analysis of the procedures of Soghomon Tehlirian and Misak Torlakyan has been carried out which reveals many similarities within the organization of the protection in the court.



## СОГОМОН ТЕЙЛИРЯН И ОПЕРАЦИЯ «НЕМЕСИС»

К 100-летию решения 9-го съезда АРФ  
Дашнакцутюн о Специальном деле

Гоар В. Ханумян

**Ключевые слова** - Согомон Тейлирян, Специальное дело, операция «Немесис», Аарон Сачаклян, судебный процесс над младотурками, Армен Гаро, Шаан Натали, 9-ое Общее собрание АРФ Дашнакцутюн, Османская империя, организаторы Геноцида армян, Талаат.

В данной статье представлено новое видение истории Специального дела - «Атук Горц» (известной как операция «Немесис») - по исполнению приговоров турецкого военного трибунала над главарями младотурок, организовавших Геноцид армян. Основой данного подхода служит недавно обнаруженный и опубликованный архив нововыявленного члена Специального дела Аарона Сачакляна, а также другие исторические факты. Для изучения Специального дела рассматривается список преступников, составленный 9-м Общим собранием АРФ Дашнакцутюн, состоявшимся с 28 сентября по 2 ноября 1919 г., и другие списки главарей младотурок.

Важно отметить, что для исследования Специального дела автор данной статьи впервые в армянской историографии использует работы современного французского журналиста-исследователя Жака Дерожи и профессора Мариан Месробян МакКарди. В статье представлены неизвестные эпизоды биографии Тейлиряна, который был самой известной фигурой операции «Немесис». Хотя Тейлирян широко известен, его биография недостаточно представлена в научной литературе. В частности, в статье представлены его усилия по поиску армянских сирот в 1916-1917 гг., в своем родном городе Ерзнка (Эрзинджан), причастность Тейлиряна к Специальному делу в 1920-1921 гг. по раскрытию младотурецких преступников в Берлине.

В статье также представлена подготовительная работа по судебному процессу над Согомоном Тейлиряном, в особенности, деятельность Специального фонда («Атук гумар»), созданного АРФ Дашнакцутюн для материальной поддержки Специального дела. Был проведен сравнительный анализ процессов над Согомоном Тейлиряном и Мисаком Торлакяном, выявляющий множество сходств в организации защиты в суде.

## REFERENCES

1. «Hayrenik» amsagir, Posten, 1960 t. ., ògostos **(In Armenian)**.
2. **Anumyan M.**, Chanach'um yev datapartum. Yeritt'urk'akan datavarut'yunnerè (1919-1920 t't. ev 1926 t.), Yer., Hayots' ts'eghaspanut'yan t'angaran-institut, 2013 **(In Armenian)**.
3. **Ayvazyan M.**, Ovk'er en spanel Jemal p'ashayin, Yer., «Fenomen», 2016 **(In Armenian)**.
4. Genocid armjan: otvetstvennost' Turcii..., t. 2, chast' 2, M., 2005 **(In Russian)**.
5. Girk' matuts'man yev hatuts'man. hushardzan Aram Yerkaneani, Los-Anjeles, tp. «Payk'ar», 1949 **(In Armenian)**.
6. H. Y. Dashnaks'ut'ean t'angaran himnadram, fond 330 d **(In Armenian)**.
7. Hayastani azgayin arkhiv (HAA), f. 314, ts'. 24, g. 2 **(In Armenian)**.
8. Hayeri ts'eghaspanut'yunè èst yeritt'urk'akan datavarut'yan p'astat'ght'eri, Arajabanè, t'argmanut'yunè yev tsanot'agrut'yunè` A. H. P'ap'azyani, Yer., HSSH GA arevelagit. institut, 1988 **(In Armenian)**.
9. Hayots' patmut'yun, khmb. khorhurd` V. Barkhudaryan yev urishner, hat. 4, girk' arajin, Yer., 2010 **(In Armenian)**.
10. **Khanumyan G.**, Hayots' ts'eghaspanut'yan tarinerin «mek hay-mek voski» p'rkut'yan arak'elut'yan harts'eri surj, «Ts'eghaspanagitakan handes», 2017, N 5 (2) **(In Armenian)**.
11. **Khanumyan G.**, Soghomon T'ehliryan-120  
[/http://www.genocide-museum.am/arm/soghomon-tehliryan.php](http://www.genocide-museum.am/arm/soghomon-tehliryan.php) (mutk'` 06.11.2019)  
**(In Armenian)**.
12. **Matt'ëosean V.**, HAYKÕ T'alëat'i ahabekumin verjin antsanõt' masnakits'ë, «Banber Matenadarani» Yer., 2014, N 21, **(In Armenian)**.
13. **Nat'ali Sh.**, Srbazan khelagarut'yun (hodvatsneri zhoghovatsu), Yer., 2007 **(In Armenian)**.
14. **Qeshishyan M.**, Nemesisi zinvorè` Hakob Zoryan, «Hay zinvor», N 20 (987), 23.05.2013 **(In Armenian)**.
15. **Sapunchean Z.**, Hrach' P'ap'azean. Yeghap'okhakan yew azgayin mets gortsich' (keank'n u gortsë), Pëyrut', 1987 **(In Armenian)**.
16. **Shirakean A.**, Ktahn èr nahataknerun, «Hamazgayin», Pëyrut', 1965 **(In Armenian)**.
17. Soghomon T'ehleryani datavarut'yunè (sghagrut'yun), Yer., «Arevazun», 1990 **(In Armenian)**.
18. Sudebnyj process Talaata pashi: stenograficheskij otchjot. Pod redakciej, s predisloviem i primechanijami doktora istoricheskix nauk, professora Stepana Stepanjana, Jer., 2007 **(In Russian)**.
19. **Tasnapeatean H.**, H. Y. Dashnaks'ut'iwnè ir kazmutenën minch'ew Zh. Èndh. zhoghovè (1890-1924), At'ënk', «Dròshak»-i tparan, 1988 **(In Armenian)**.
20. **T'ehlirean S.**, Veryishumner (T'alëat'i ahabekumè), gri arav` **Vahan Minakhorean**, Gahirè, tp. «Yusaber», 1953 **(In Armenian)**.
21. **T'ehliryan S.**, Verhishumner (T'aleat'i ahabekumè), gri arav **Vahan Minakhoryanè**, Yer., Hayastani GAA hrat., 1993 **(In Armenian)**.
22. **T'orlak'ean M.**, Örerus het, B hratarakut'iwn, Pëyrut', 1982, tp. «HAYK-Chëmmëyzë», 1963 **(In Armenian)**.